ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

24 դեկտեմբերի 2015թ. թիվ 336

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՈՐՈՇ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 10-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի զեկուցագիրը և հաշվի առնելով, որ մարզպետարանի ապարատի 2015թ. պահպանման ծախսերի «Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ» և «Այլ վարձատրություններ» հոդվածներում առկա է տնտեսում՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

Մարզպետարանի առջև դրված աշխատանքների կոորդինացման և խնդիրների իրականացման գործում որակով և ակտիվ աշխատանքի համար ՀՀ Լոռու մարզպետին, մարզպետի տեղակալներին և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին պարգևատրել դրամական պարգևով՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. դեկտեմբերի 24
ք.Վանաձոր